ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/19-ԱՎԼ-ՃՈ-2017

ք. Երևան 16.02.2017 թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից,և «Յուտեկ-Ավտո» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոլվացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) Խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը.

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 26 749 200 (քսանվեց միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.1 կետի համաձայն կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՓՈՓՈՒՍ-ՍԱԺՈՒ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, տարերային աղետը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացնելու պայմանով՝ կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու պահից՝ 2017թ. արտաբյուջետային ռատկացումների եռամսյակային համամասնությունների համաձայն և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում Ծառայությունների կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Լրացվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու որքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու ծանուցումը, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **8** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900013150041
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-60-39
էլ. Փոստ: police-gnumner@rambler.ru

Կատարող
«Յուտեկ-Ավտո» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 4թաղ. 46/5
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ,
Դավիթաշեն մ/ճ
Հ/Հ 220290123060000
ՀՎՀՀ 01250458
էլ. հասցե՝ utec_auto@yahoo.com
հեռ. 091 66-11-90, 091 66-11-09

______ Տ. Գևորգյան
Տնօրեն/
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 1
16.02.2017թ.
Թիվ << ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/19-ԱՎԼ-ՃՈ-2017>> գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր
1. Գնման առարկա է հանդիսանում ճանապարհային ոստիկանությանը պատկանող. ծառայողական ճանապարհապարեկային. հատուկ ուղեկցումների և քննական ավտոմոբիլների լվացում. որից. - ՀՈ 1-ին սպայական գումարտակին ամրակցված ճանապարհապարեկային ավտոմոբիլներ սեդան թափքով - 78 հատ. ունիվերսալ թափքով - 1 հատ /լրակազմված TBD-GA տիպի լուսաձայնային սարքավորումով/, 1 ավտոմոբիլի լվացումը 5-6 օրը մեկ անգամ հաշվարկով: - ՀՈ ուղեկցող սպայական վաշտին ամրակցված հատուկ ուղեկցումների ավտոմոբիլներ սեդան թափքով - 32 հատ. ունիվերսալ թափքով – 4 հատ / լրակազմված TBD-GA տիպի լուսաձայնային սարքավորումով/. 1 ավտոմոբիլի լվացումը 5-6 օրը մեկ անգամ հաշվարկով: - ՀՈ կենտրոնական ապարատին և Եր.ՀՔԲ-ին ամրակցված ծառայողական և քննական ավտոմոբիլներ սեդան թափքով – 19 հատ. ունիվերսալ և հետչբեկ թափքերով – 2 հատ, 1 ավտոմոբիլի լվացումը շաբաթական մեկ անգամ հաշվարկով 2. Ծառայության մատուցումը՝ Երևան քաղաքում. ավտոմոբիլների կայանատեղից (Թաիրովի 14 և Ծովակալ Իսակովի 9) մինչև 10 կմ հեռավորությամբ: 3. Ավտոմոբիլների լվացումը՝ հպումով. ոչ ավտոմատ եղանակով, սրահի քիմմաքրում, սրահի մաքրում փոշեկուլի միջոցով, շարժիչի լվացում, թափքի փայլեցում և խազերի վերացում հատուկ նյութերով: 4. Աշխատանքի տևողությունը՝ 1 ավտոմոբիլի համար մինչև 7 - 10 րոպե: 5. Ավտոմոբիլների լվացումը կատարել Ճանապարհային ոստիկանության կողմից տրված կտրոններով: 6. Ավտոմոբիլների լվացումը 3 հերթափոխով, հետևյալ ռեժիմով. 1-ին հերթափոխ - ժ. 06^{00} մինչև ժ. 10^{00} 2-րդ հերթափոխ - ժ. 14^{00} մինչև ժ. 18^{00} 3-րդ հերթափոխ - ժ. 19^{00} մինչև ժ. 24^{00}: 7. Ավտոլվացման համար նախատեսված տարածքը ոչ պակաս 200 քառ.մ. 8. Միաժամանակ յոթ ավտոմեքենա լվանալու հնարավորությամբ, առնվազն 2 առանձին մուտքերով և 2 առանձին ելքերով, ավտոմեքենաները հերթականությամբ 2 շարքով ավտոլվացման սրահ մտնելու և դուրս գալու հնարավորություն:

9. Ավտոլվացման կետը ունենա առնվազն 7 աշխատող:

10. Ավտոլվացման ընթացքում գունագրաֆիկ ձևավորումը վնասվելու դեպքում՝ վնասի փոխհատուցում:

11. Առանձին փակ սպասասրահի առկայություն:

<<Յուտեկ –Ավտո>> ՍՊԸ-ն սեդան թափքով ավտոմոբիլի միավոր մեքենայի ավտոլվացման ծառայությունը մատուցում է 2100 ՀՀ դրամով, իսկ ունիվերսալ թափքով միավոր մեքենայի ավտոլվացման ծառայությունը՝ 2400 ՀՀ դրամով :

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու պահից	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու պահից, բայց ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-60-39
էլ. Փոստ: police-gnumner@arminet.ru

/ՀՀ ոստիկանություն/
(ստորագրություն)

Կատարող

«Յուտեկ-Ավտո» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 4թաղ. 46/5
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ, Դավիթաշեն մ/ճ
Հ/Հ 220290123060000
ՀՎՀՀ 01250458
էլ. հասցեն՝ utec_auto@yahoo.com
հեռ. 091 66-11-90, 091 66-11-09

Տ. Գևորգյան
/Տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/19-ԱՎԼ-ՃՈ-2017 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «16» 02. **2017թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից.և «Յուտեկ-Ավտո» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 16.02.2017թ.-ին կնքված N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/19-ԱՎԼ-ՃՈ-2017 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատուցել Պայմանագրի N1 Հավելվածով նախատեսված ծառայությունները /այսուհետև Ծառայություն/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունները և վճարել դրանց համար:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 4 925 000 (չորս միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Պատվիրատուն 4 925 000 (չորս միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ գումարի վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ ոստիկանություն	«Յուտեկ-Ավտո» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	ք. Երևան, Դավիթաշեն 4թաղ. 46/5
ՀՀ Ֆինանսների նախարարության	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ,
աշխատակազմի գործառնական	Դավիթաշեն մ/ճ
վարչություն	Հ/Հ 22029012306000 0
Հ/Հ 900013150041	ՀՎՀՀ 01250458
ՀՎՀՀ 01840082	էլ. հասցե՝ utec_auto@yahoo.com
հեռ. 89-60-39	հեռ. 091 66-11-90
_____	_____
/ՀՀ ոստիկանության գլխավոր քարտուղար գեներալ-մայոր/	/Տնօրեն/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«16» 02 2017թ.
Համաձայնագիր N 1
N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/19-ԱՎԼ-ՃՈ-2017 գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ՃՈ արտաբյուջեից												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	Ավտոլվացման ծառայությունների		4 925 000	4 925 000	4 925 000	4 925 000	4 925 000	4 925 000	4 925 000	4 925 000	4 925 000	4 925 000	4 925 000	
Ընդամենը														4 925 000

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-60-39

Ա.Հովհաննիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

«Յուտեկ-Ավտո» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 4թաղ. 46/5
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ, Դավիթաշեն մ/6
Հ/Հ 220290123060000
ՀՎՀՀ 01250458
էլ. հասցեն՝ utec_auto@yahoo.com
հեռ. 091 66-11-90, 091 66-11-09

Ց.Գևորգյան
/Տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ